ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«03» փետրվարի 2025թ. № 97

ԱԼՎԱՐԴ ՍՄԲԱՏԻ ՄԽԻԹԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՈՎ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով, հաշվի առնելով, որ գոյություն ունի միևնույն անձի, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով ուժի մեջ մտած վարչական ակտ՝ Սպիտակի քաղաքապետի 2008 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 034/28-784 գրությունը, որն օրենքով սահմանված կարգով անվավեր կամ առ ոչինչ չի ճանաչվել՝ ***որոշում եմ.***

1. Ալվարդ Սմբատի Մխիթարյանի՝ ք. Սպիտակում բնակարան արտահերթ ստանալու իրավունք ունեցողների հերթացուցակում ընդգրկելու մասին 2025 թվականի հունվարի 17-ի դիմումով հարուցված վարչական վարույթը կարճել:

2. Սույն որոշման մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով եռօրյա ժամկետում իրազեկել Ալվարդ Սմբատի Մխիթարյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակցին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Սպիտակ համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. փետրվարի 3
ք. Սպիտակ